ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ կրթության տեսչական մարմնի խորհրդի նիստ

ք.Երևան 03 հուլիսի 2018թ.

Ժամը 16[15]

Մասնակիցներ

Ա.Հարությունյան	- ՀՀ կրթության և գիտության նախարար (խորհրդի նախագահ)
Հ.Այվազյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Բաբայան	- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
Ա. Ասատրյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ա. Հայրապետյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ս. Ալոյան	- «Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ
Բ. Փափազյան	- «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ
Ա. Բախշյան	- «Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության նախագահի կրթության հարցերով խորհրդական

Բացակայում է

Թ. Ավակյան	- «Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամի ծրագրի գլխավոր տնօրեն

Ներկաներ

Ալ. Շագաֆյան	- ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավար
Ա. Գևորգյան	- Կառավարման խորհրդի քարտուղար

Հրավիրվածներ

Տ. Հակոբյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
Ռ. Գալստյան	- ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի խորհրդական

ՕՐԱԿԱՐԳ

Հարց 1. ՀՀ կրթության տեսչական մարմնի 2018թ. տարեկան ծրագրի նախագծի հաստատում:

ա) 2018թ. իրականացվելիք միջոցառումների կատարման ժամանակացույցի նախագծի հաստատում

բ) ՀՀ կրթության տեսչական մարմնի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների 2018թ. տարեկան ծրագրի նախագծի հաստատում:

Հարց 2. ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների տարեկան ծրագրի նախագծի հաստատում:

Հարց 3. ՀՀ կրթության տեսչական մարմին հանրությունից ստացվող բողոքների ընդունման և հետագա ընթացք տալու մասին կարգի նախագծի հաստատում:

Հարց 4. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությանը և ռիսկայնությունը որոշող չափորոշիչներին և ստուգաթերթերին:

Հարց 5. Այլ հարցեր:

Նիստը վարում է կառավարման խորհրդի նախագահ՝ **Ա. Հարությունյանը**

Ա. Հարությունյանը խորհրդի հաստատմանը ներկայացրեց նիստի օրակարգը, որում ընդգրկված էր հինգ հարց:

Խորհրդի անդամները օրակարգը հաստատեցին ՄԻԱՁԱՅՆ:

Նախագահողը առաջարկեց ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավար Ալ. Շագաֆյանին ներկայացնել օրակարգային հարցերը:

<u>Օրակարգի առաջին հարցով</u> Ա. Շագաֆյանը խորհրդի քննարկմանը ներկայացրեց ՀՀ կրթության տեսչական մարմնի 2018թ. աշխատանքային ծրագիրը:

ա) 2018թ. իրականացվելիք միջոցառումների կատարման ժամանակացույցը (հավելված 1):

բ) ՀՀ կրթության տեսչական մարմնի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների 2018թ. տարեկան ծրագիրը (հավելված 2):

Ա. Շագաֆյանը նշեց, որ առաջարկվող ծրագիրը ծավալային առումով նախատեսվածից ավելի պակաս է, քանի որ սույն թվականի ապրիլ-հունիս ամիսներին օբյեկտիվ պատճառներով խորհրդի նիստ չի հրավիրել:

Ներկայացված ծրագրով 2018 թվականին ՀՀ կրթության տեսչական մարմինը (ԿՏՄ) ուսումնասիրություններ է իրականացնելու թվով 45 մանկապարտեզներում, 19 դպրոցներում, 5 նախնական մասնագիտական (արհեստագործական) և 6 միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում, վերահսկողություն է իրականացնելու ՀՀ Վայոց ձորի, ՀՀ Կոտայքի մարզպետարանների և ՀՀ Արարատի մարզի Մասիսի, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի, ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի, ՀՀ Տավուշի մարզի Իջևանի համայնքապետարանների կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում:

Ա. Շագաֆյանը առաջարկեց ՀՀ ԿՏՄ ղեկավարի խորհրդական Ռ. Գալստյանին՝ ներկայացնել նշված սուբյեկտների ընտրության սկզբունքը:

Ռ. Գալստյանը հայտնեց, որ **նախադպրոցական կրթության ոլորտում** ծրագրով նախատեսված ստուգումներն իրականացվելու են թվով 45 նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (ՆՈՒՀ) (Երևանի Աջափնյակ, Դավթաշեն վարչական շրջանների, ՀՀ Արարատի մարզի Մասիս, Նոր Խարբերդ, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր, Փարաքար, ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան, ՀՀ Տավուշի մարզի Իջևան, ՀՀ Կոտայքի մարզի Քասախ, Զովունի, Նոր Հաճն, Պռոշյան, ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարմիրգյուղ համայնքների ՆՈՒՀ-եր):

Այս ոլորտում թիրախային են համարվել այն ՆՈՒՀ-երը, որտեղ Կրթության պետական տեսչության կողմից ստուգում կամ ուսումնասիրություն իրականացվել է մինչև 2012 թվականը:

Միջնակարգ կրթության ոլորտում ստուգումներ են իրականացվելու թվով 19 հանրակրթական ուսումնական հաստատությունում (դպրոց) (ՀՀ Վայոց ձորի մարզի թվով 15, ՀՀ Արարատի մարզի թվով 1, Երևան քաղաքի թվով 3 դպրոց): Այս ոլորտում ընտրված ուսումնական հաստատությունները բաժանվում են 4 թիրախային խմբի:

Առաջին խմբի համար թիրախայնության բնութագրիչ է հանդիսացել 50-100 սովորող ունենալը, **երկրորդ խմբի համար՝** 100-200-ը (ի դեպ, այս դպրոցներում Կրթության պետական տեսչության կողմից կրթական գործընթացի ստուգում կամ ուսումնասիրություն չի իրականացվել), **երրորդ խմբի համար՝** Կրթության պետական տեսչության կողմից իրականացված կրթական գործընթացի ուսումնասիրության արդյունքում ցածր ցուցանիշներ ունենալը, **չորրորդ խմբի համար՝** վերջին երեք տարիների ընթացքում ստացված դիմում-բողոքները:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ոլորտում ստուգումներ են իրականացվելու թվով 5 նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունում: Թիրախայնության բնութագրիչ է հանդիսացել այն փաստը, որ Կրթության պետական տեսչության կողմից վերջին 5 տարիների ընթացքում այդ հաստատություններում ստուգում (տեսչավորում) չի իրականացվել:

Միջին մասնագիտական կրթության ոլորտում ստուգումներ են իրականացվելու թվով 6 միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում: Այս ոլորտում թիրախային են համարվել այն հաստատությունները, որոնց վերաբերյալ 2018 թվականին Կրթության տեսչական մարմնում ստացվել են դիմում-բողոքներ:

Մարզպետարանների աշխատակազմերի կրթության, մշակույթի և սպորտի վարչություններում վերահսկողական գործընթացն իրականացվում է երեք տարին մեկ անգամ պարբերականությամբ (ՀՀ Կոտայքի մարզպետարանում վերջին վերահսկողական գործընթացն իրականացվել է 2014թ-ին, իսկ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում՝ 2015թ-ին): ՀՀ Արարատի մարզի Մասիսի, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի, ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի, ՀՀ Տավուշի մարզի Իջևանի համայնքապետարանների աշխատակազմերի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում վերահսկողության իրականացման տրամաբանությունը պայմանավորված է տվյալ համայնքներում գործող ՆՈՒՀ-երում նախատեսված ստուգումներ իրականացնելու արդյունքում կրթության իարավիճակի վերաբերյալ ավելի ամբողջական պատկեր ստանալու նպատակով:

Ա. Բախշյանը հարցրեց, թե ի՞նչ ասել է առաջադիմության ցածր ցուցանիշներ ունեցող դպրոցներ և ո՞րոնք են այդ ցուցանիշները:

Ռ. Գալստյանը պարզաբանեց, որ ուսումնական հաստատությունների կրթական գործունեության ուսումնասիրության արդյունքում ըստ գործունեության ոլորտների, ուսումնական հաստատությունը ստանում է միավորներ: Այդ միավորների հանրագումարով տեսչական մարմինը գնահատում է տվյալ ուսումնական հաստատության գործունեության ընդհանուր միավորը:

Ա. Բախշյանը հետաքրքրվեց, թե արդյո՞ք այդ գնահատականները համընկնում են ՀՀ ԿԳՆ ԿՏԱԿ-ի կողմից իրականացվող ուսումնական հաստատությունների վարկանիշավորմանը:

Ռ. Գալստյանը նշեց, որ դրանք հաճախ չեն համապատասխանում:

Ա. Շագաֆյանը լրացրեց, որ պատճառը մեթոդաբանության տարբերությունն է, որի արդյունքում իրարից տարբերվող ռեյտինգավորում է ստացվում:

Ա. Բախշյանը հետաքրքրվեց տեսչական մարմնի բովանդակային ուսումնասիրություններով՝ ասելով, թե տեղյակ է, որ տեսչական մարմինը այդ ուսումնասիրությունների ժամանակ գրավոր աշխատանքներ է հանձնարարում սովորողներին: Հետաքրքրվեց, թե արդյո՞ք բավարար չէ օգտվել Գնահատման և թեստավորման կենտրոնի արտաքին գնահատման տվյալներից:

Ռ. Գալստյանը պատասխանեց, որ այդօրինակ ուսումնասիրությունների տրամաբանությունը սովորողի մնացորդային գիտելիքների ստուգումն է, այլ կերպ ասած, հաջորդ դասարան փոխադրված սովորողի կողմից նախորդ տարվա նյութի պարտադիր նվազագույն պահանջներին յուրացումը, այլ ոչ թեստային համակարգի կիրառումը:

<u>Օրակարգի երկրորդ հարցով</u> Ռ.Գալստյանը ներկայացրեց ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների տարեկան ծրագիրը ըստ հավելվածի:

Ա. Հայրապետյանի դիտարկմամբ ծրագիրն առավելապես կենտրոնացած է ստուգումների և վարահսկողության վրա, բացակայում է վերլուծական աշխատանքը:

Ա. Շագաֆյանը համաձայնեց դիտարկմանը՝ ասելով, որ սա համարում են անցումային շրջանի ծրագիր և պարտավորվում են 2019 թվականի ծրագրի տրամաբանությունն ու դրանից բխող գործողությունները պայմանավորել իրավիճակի գնահատման, տարբեր խնդիրների վերլուծության արդյունքներով:

Ա. Բախշյանը նշեց, որ ծրագրում չի տեսնում տեսչական մարմնի կանոնադրությամբ սահմանված այնպիսի կարևոր գործառույթ, ինչպիսին է ղեկավար և մանկավարժական աշխատողների ընտրության հավաստագրման գործընթացի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը: Առաջարկում եմ ստուգել հավաստագիր ստանալու ընթացակարգի օրինականությունը, որը ենթադրում է հավաստագրման գործընթացին նախորդող վերապատրաստող կազմակերպությունների համապատասխանությունը ԿԳ նախարարի 2010թ. մայիսի 18-ի N393-Ն հրամանով հաստատված հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով վերապատրաստման և վերապատրաստող կազմակերպության ընտրության կարգին, ինչպես նաև վերապատրաստման վկայականի տրման ընթացակարգի օրինականությանը: Արդյո՞ք այդ կազմակերպությունների երաշխավորումը կարգին համապատասխան է արվել:

Ռ. Գալստյանը պարզաբանեց, որ մինչ այս տեսչությունը նման լիազորություն չի ունեցել, իսկ այսուհետ խորհրդի հաստատմանը կներկայացվեն ձևաթղթեր, համաձայն որոնց հավաստագրման գործընթացին վերաբերող փաստաթղթերը և ընթացակարգերի համապատասխանությունը կուսումնասիրվեն ՀՀ ԿԳՆ աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումում:

Հ. Այվազյանի դիտարկմամբ ներկայացված ծրագիրը ավելի նման է տեսչական մարմնի ստուգումների հիմնավորմանը, քան տեսչական մարմնի տարեկան գործունեության աշխատանքային ծրագրին և հույս հայտնեց, որ հաջորդ տարվա համար որակապես այլ ծրագիր կներկայացվի:

Հ. Այվազյանը դիտարկում արեց նաև իրազեկման միջոցառումների վերաբերյալ՝ առաջարկելով ապահովել դրանց չափելիությունը համապատասխան ցուցիչներով:

Հ. Այվազյանը առաջարկեց հաջորդ՝ 2019 թվականի աշխատանքային ծրագիրը տեսչական մարմնի կողմից կառավարման խորհրդի քննարկմանը ներկայացնել նախապես, մինչև ստուգումների տարեկան ծրագիրը քննարկման ներկայացնելը, ներառնելով նաև ոլորտում առկա միջազգային փորձը:

Օրակարգի երրորդ հարցով խորհրդի քարտուղար Ա. Գևորգյանը ներկայացրեց ՀՀ կրթության տեսչական մարմին հանրությունից ստացվող բողոքների ընդունման և հետագա ընթացք տալու մասին կարգի նախագիծը: Անդրադառնալով կարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետին (**անձը հաստատող փաստաթղթի տվյալներ)՝** նշեց, որ դիմումատուի անունը, ազգանունը թղթային կրիչի դեպքում՝ ստորագրությունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը, պաշտոնատար անձի ստորագրությունը, բնակության վայրի հասցեն, իրավաբանական անձի գտնվելու վայրը, հետադարձ կապի միջոցը՝ էլեկտրոնային փոստ կամ հեռախոսահամար, լրիվ բավարար են վարչական վարույթ հարուցելու համար:

Ա. Շագաֆյանը լրացրեց՝ նշելով, որ «թեժ գծի» հետ կապված խնդիր կա, քանի որ այն ներկայացվող կարգում ներառված չէ և խնդրեց ցուցաբերել մասնագիտական մոտեցում: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում հստակ ներկայացված է բողոքի վերահասցեագրման կարգը, որում սակայն որպես բողոքի ներկայացման ձև ներառված չէ «թեժ գիծը»:

Քննարկման արդյունքում խորհրդի անդամները որոշեցին կարգի նախագծի 4-րդ կետի 4-րդ ենթակետում՝ «**անձը հաստատող փաստաթղթի տվյալներ**» եզրույթի հետ առայժմ նշել՝ «**ըստ անհրաժեշտության**» բառերը, հետագայում այս կետը վերանալու պայմանով:

Օրակարգի չորրորդ հարցով կառավարման խորհրդի նախագահը քննարկման ներկայացրեց ՀՀ կրթության տեսչական մարմնի՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափորոշիչներն և ստուգաթերթերը:

Ռ. Գալստյանը մեկնաբանեց, որ մեթոդաբանությունը տիպային օրինակի վրա է կառուցված և համապատասխանեցված է կրթության ոլորտին: Յուրաքանչյուր հաստատություն ունի ռիսկ, և այդ ռիսկը ձևավորվում է ոլորտային ռիսկից և անհատական ռիսկից: Ոլորտային ռիսկի ձևավորման բաղադրիչները նշված են: Անհատական ռիսկն էլ իր հերթին ունի 2 բաղադրիչ՝ 1-ին և 2-րդ: 1-ին բաղադրիչը ուսումնական հաստատության կրթական գործունեությունը բնութագրող բաղադրիչն է, որը 50 միավոր է, դա առաջանում է օրինակ՝ նախադպրոցական հաստատության տարատարիք խմբերի քանակից (օրինակ՝ կրտսեր վաղ տարիք, միջին և ավագ): Երբեմն իրականացնում են դաստիարակություն՝ բոլոր

երեխաներին ընդգրկելով մի խմբում, կամ տարատարիք խմբում առանձին ծրագրերով չեն իրականացվում կրտսեր կամ ավագ տարիքի ծրագրերը կամ ուսումնական հաստատությունում գերբեռնված խմբեր են առկա:

Միջնակարգ դպրոցի պարագայում որպես խնդիր են դիտվել ուսումնական հաստատության հերթայնությունը, գերբեռնված դասարանների առկայությունը, չդասավանդվող առարկաները, վերջին 3 տարիներին աշխատանքի ընդունված մանկավարժական աշխատողների որակավորման և ուսումնական պլանի խախտումները: Նախնական մասնագիտական կրթության պարագայում որպես ռիսկ դիտվել է սովորողների թիվը կամ մանկավարժական աշխատողների շարժը և լիցենզիայի առկայության պարագայում՝ տվյալ մասնագիտությամբ սովորողների ընդունելություն չիրականացնելը (օրինակ՝ հաստատությանը տրված է վարսավիրության լիցենզիա, սակայն վերջին 3 տարվա ընթացքում որևէ սովորող չի ընդունվել տվյալ մասնագիտությամբ):

Քանի որ միջին մասնագիտական կրթության ոլորտը 2018 թվականից է ընդգրկվել տեսչական մարմնի վերահսկողության լիազորությունների շրջանակում, և դեռևս ստուգումներ չեն իրականացվել, ուստի հաշվի են առնվել 2018 թվականին ստացված դիմումների ուսումնասիրման առկա արդյունքները:

2-րդ բաղադրիչն էլ գոյանում է ստուգաթերթերից՝ 150 միավոր, ռիսկի ընդհանուր միավորը՝ 300 միավոր:

Ա. Բախշյանը հետաքրքրվեց այն հաստատության ապագայով, որը հնարավոր է՝ հավաքի 300 միավոր:

Ռ. Գալստյանը պարզաբանեց, որ այդ դեպքում նշված հաստատությունը կհայտնվի 1-ին՝ ռիսկայնության ամենաբարձր խմբում, ինչը հիմք կհանդիսանա այնտեղ տարին մեկ անգամ իրականացնելու ստուգում և աջակցելու, որ ռիսկայնությունը նվազի:

Հ. Այվազյանը նշեց, որ ցանկացած մոդել, լինելով լավ կամ վատ, չի կարող ընդունելի չլինել և կարծում է, որ մինչև տարեվերջ այդ մեթոդաբանությամբ գնահատելով 100 կամ 200 միավոր՝ արդյունքներն ուսումնասիրելուց կպարզվի, թե ինչքանով են դրանք հաջողված, իսկ եթե ոչ, ապա ի՞նչ փոփոխությունների կարիք կլինի՝ այն շտկելու համար:

Այլ հարցերը չքննարկվեցին և օրակարգի հարցերը սպառվեցին:

Ամփոփելով նիստը՝ կառավարման խորհրդի նախագահ Ա. Հարությունյանը քննարկված հարցերը դրեց քվեարկության:

Խորհուրդը միաձայն որոշեց՝

1. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի 2018 թվականի գործունեության ծրագրի նախագծը, 2018թ. իրականացվելիք միջոցառումների կատարման ժամանակացույցը, ՀՀ կրթության տեսչական մարմնի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների 2018թ. տարեկան ծրագրի նախագիծը՝ խորհրդի կողմից առաջարկվող լրացումներով (N 07-02-01 որոշում):

2. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների տարեկան ծրագիրը (N 07-02-02 որոշում):

3. Սահմանել ՀՀ կրթության տեսչական մարմին հանրությունից ստացվող բողոքների ընդունման և հետագա ընթացք տալու մասին կարգը՝ ըստ խորհրդի կողմից նշված փոփոխության (N 07-02-03 որոշում):

4. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությանը և ռիսկայնությունը որոշող չափորոշիչներին և ստուգաթերթերին (N 07-02-04 որոշում):

ՀՀ կրթության և գիտության նախարար, խորհրդի նախագահ

Ա.Հարությունյան

ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար, խորհրդի անդամ

Հ.Այվազյան

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ, խորհրդի անդամ

Ա.Բաբայան

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, խորհրդի անդամ

Ա. Ասատրյան

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, խորհրդի անդամ

Ա. Հայրապետյան

«Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ, խորհրդի անդամ

Ս.Ալոյան

«Թումո» սեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն, խորհրդի անդամ

Բ. Փափազյան

«Հանրային դիվանագիտություն» ՀԿ-ի կրթության հարցերով խորհրդական, խորհրդի անդամ

Ա. Բախշյան

ՀՀ ԿԳՆ ԿՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ, խորհրդի քարտուղար

Ա.Գևորգյան